

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 1/12

Քաղ. Երևան

25 հունվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. հունվարի 25-ի նիստում (արձանագրություն N 1.1) քննարկեց «Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա» ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից 2011թ. դեկտեմբերի 26-ին ներկայացված «КНИГА ДЖУНГЛЕЙ» (IR 1044912) բառային ապրանքային նշանի ՀՀ տարածքում գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել "Ապրանքային նշանների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2-րդ մասի 1-ին կետի "ա" ենթակետը, "Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու" կարգի 87-րդ կետի 2-րդ "ա", 106.1-ին կետի "ա", 115-րդ կետի 1-ին, 117-րդ կետի 10-րդ, 119-րդ կետի 2-րդ ենթակետերը, համաձայն որոնց գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված նշանը ենթակա չէ գրանցման որպես ապրանքային նշան նույնական և նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում ավելի վաղ գրանցման հիման վրա պահպանվող շփոթելու աստիճան նման "ԴժՈՒՆԳԼԻ" (ռուս.) ("Գրանդ քենդի" հայ- կանադական ՀԶ ԱՊԸ-ի, Եղվարդ, Մասիսի 31) 1Տ1 10287) շփոթելու աստիճան նման բառային ապրանքային նշանի առկայության պատճառով, քանի որ նշաններից մեկը մտնում է մյուսի մեջ, տվյալ դեպքում գրանցված "ԴժՈՒՆԳԼԻ" (ռուս.) բառը մտնում է հայտարկված "ԿՆԻԳԱ ԴժՈՒՆԳԼԵՅ" (ռուս.) բառային ապրանքային նշանի մեջ,

ինչպես նաև նշաններն ունեն իմաստային նմանություն "ԴԺՈՒՆԳԼԻ" (ռուս.) տարրով, որն առանձին իմաստ ունի և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը:

Բողոքարկողը համաձայն չէ կրկնական փորձաքննության որոշման հետ և բողոքի մեջ ներկայացրել է իր փաստարկները: Բողոքում նշված է, որ «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կանոնների» 97-րդ կետի համաձայն՝ «Բառային նշանների նմանությունը կարող է լինել ձայնային (հնչյունային), գրաֆիկական (տեսողական) և իմաստային:

Ստորև ներկայացված են բողոքարկողի հիմնավորումները հայտարկված և հակադրված ապրանքային նշանների ձայնային, գրաֆիկական և իմաստային տարբերության վերաբերյալ:

Հայտարկված նշանը իրենից ներկայացնում է բառային ապրանքային նշան, որը բաղկացած է 2 բառային տարրերից՝ կատարված Times New Roman կիրիլիցա, նշահատումներով, թավ տառատեսակով: Նշանը ձգված է հորիզոնական ուղղությամբ և միատեսակ է իր կառուցվածքով, ինչի հետևանքով էլ բացակայում է գրաֆիկական կենտրոնը, ընդ որում սպառողի ուշադրությունը հավասարաչափ բաշխելով հայտարկված նշանի բոլոր տարրերի վրա:

Հայտարկված նշանի կատարման առանձնահատկությունը "H" և "Г" տառերի կրկնությունն է, որոնք առկա են ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ բառերում: Հետևաբար, նշանի հորիզոնական ձգվածության և 2 բառային էլեմենտների առկայության շնորհիվ սպառողի գիտակցության մեջ ստեղծվում է հատկանշական գրաֆիկական կերպար, որն ունի տարրերի վառ արտահայտչականություն և հորիզոնական դիրք:

Հակադրված նշանը բառային է և բաղկացած է ընդամենը 1 տարրից՝ կատարված ստանդարտ տառատեսակով: Հայտատուն հարկ է համարում նշել նաև, որ «КНИГА ДЖУНГЛЕЙ» հայտարկված նշանը բաղկացած է 13 տառային էլեմենտից, իսկ «ДЖУНГЛИ» հակադրված նշանն իր մեջ ներառում է ընդամենը 7 տառ, ինչն էլ մեծ դեր է խաղում համեմատվող նշանների տեսողական ընկալման ժամանակ:

Բողոքարկողը գտնում է, որ տարբերակիչ գրաֆիկական առանձնահատկությունների առկայության դեպքում, որով էլ պայմանավորվում է հայտարկված նշանի անհատականությունը, կարելի է եզրակացնել, որ հայտարկված և հակադրված նշանները տարբեր են և չեն կարող դիտարկվել որպես շփոթության աստիճանի նման՝ գրաֆիկակա վերլուծության չափանիշներով:

Նշված է, որ նշանների միջև առկա էական ձայնային տարբերությունները հաշվի առնելով՝ մասնավորապես ձայնավոր և բաղաձայն հնչյունների տարբեր կազմը, տարբեր արտասանությունը, ինչպես նաև նշանների առաջին մասերի անհամապատասխանությունը,

կարելի է եզրակացնել, որ հայտարկված և հակադրված նշանները շփոթության աստիճանի նման չեն իրար՝ ելնելով հնչյունային վերլուծության չափանիշներից:

Բողոքում նշված է, որ կախված է ԺՋՄՈՒՄՊԵՅԻ բառից՝ օժտված «խիտ, անանցանելի անտառ», ինչի հետևանքով էլ սպառողի գիտակցության մեջ հստակ ձևավորվում է որպես ոչ պարբերական հրատարակչության ջունգլիների մասին գրքի տեսողական կերպարը՝ կազմված բրոշյուրավորված թղթե էջերից:

Հայտատուն նշում է նաև, որ հենց գլխավոր բառով էլ որոշվում է նշանի իմաստային նշանակությունը, որն էլ հայտարկված նշանում հանդիսանում է «КНИГА» բառը:

«КНИГА ԺՋՄՈՒՄՊԵՅԻ» հայտարկված նշանը մտացածին է՝ ՊԱՕ "Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա" ընկերության շոկոլադե-վաֆլե կոնֆետները պիտակավորելու համար: Ընկերությունը մշակել է յուրօրինակ կոնցեպցիա՝ փաթեթավորելու համար իր կոնֆետները, որոնց վրա պատկերված է հեքիաթային կերպար՝ ուրախ արջի տեսքով, որը քայլում է անտառով և բաժանում կոնֆետներ, դրանով իսկ հայտարկված նշանին հաղորդելով ուրույն իմաստային նշանակություն, որն էլ թույլ չի տալիս սպառողներին շփոթել նշանները:

Ինչպես նշված է բողոքում, կոնֆետների համեմատությունը ջունգլիների մասին գրքի հետ խոսում է այն մասին, որ հայտարկված նշանի սեփականատերը ցանկանում է ցույց տալ իր արտադրանքի համար ստեղծված անհատական կերպարը՝ հայտարկված նշանում պատկերելով ավանդական հասկացություն գրքի մասին՝ որպես ինչ-որ նոր և հետաքրքիր երևույթի, որը կարող է սպառողին հաղորդել նոր և հաճելի զգացողություններ:

Բողոքարկողը նշել է, որ միջազգային հայտ N 1044912 «КНИГА ԺՋՄՈՒՄՊԵՅԻ» ապրանքային նշանը գրանցվել է այնպիսի երկրներում, ինչպիսիք են Ղազախստանը, Տաջիկստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Լատվիան, Բելառուսը, Մոլդովան, Ղրղզստանը և Մոնղոլիան:

Նշված է նաև, որ ինչպես համաշխարհային, այնպես էլ հայկական շուկայում գործունեության ողջ ընթացքում հակադրված նշանի սեփականատիրոջ կողմից որևէ բողոք, առարկություն չի եղել հայտատուի գործունեության և հայտարկված նշանի օգտագործման հետ կապված: Այսպիսով, սա ևս վկայում է հայտարկված և հակադրված ապրանքային նշանների խաղաղ համագոյակցության փորձի մասին Հայաստանի Հանրապետության տարածքում:

Բողոքում նշված է, որ հաշվի առնելով նշանների գրաֆիկական, ձայնային ու իմաստային տարբերությունները, հայտարկված նշանի տարբերակիչ և անհատականությունն ընդգծող առանձնահատկությունները, հայտատու-ընկերության արտադրանքի ֆիրմային լոգոտիպով լրացուցիչ պիտակավորումը՝ ավելի վաղ գրանցված

Հայաստանում, հայտատու-ընկերության ակտիվ կոմերցիոն գործունեությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, բողոքարկողը գտնում է, որ հայտարկված և հակադրված նշանները չեն կարող թյուրիմացության մեջ գցել հայ սպառողին և խնդրում է վերանայել ապրանքային նշանի վերաբերյալ կայացված գրանցումը մերժելու մասին նախնական որոշումը և այն գրանցել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ 30-րդ դասի հայտարկված բոլոր ապրանքների համար:

Կոլեգիայի քննարկման արդյունքները ներկայացնելիս նշվեց, որ 2011թ. դեկտեմբերի 26-ին «Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա» ընկերության ներկայացուցիչ Ա. Գալոյանի կողմից ներկայացվել է «КНИГА ДЖУНГЛЕЙ» (հայտի համարը N 1044912) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք:

Մերժման հիմք են հանդիսացել "Ապրանքային նշանների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 2-րդ մասի 1-ին կետի "ա" ենթակետը, "Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու" կարգի 87-րդ կետի 2-րդ "ա", 106.1-ին կետի "ա", 115-րդ կետի 1-ին, 117-րդ կետի 10-րդ, 119-րդ կետի 2-րդ ենթակետերը, համաձայն որոնց գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը:

Կոլեգիայի անդամի կողմից նշվեց, որ հայտարկված ապրանքային նշանը չի գրանցվել "ԴԺՈՒՆԳԼԻ" (ռուս.) շփոթելու աստիճան նման բառային ապրանքային նշանի գրանցման առկայության պատճառով: Համառոտ նշեց նաև բողոքում մեջբերված հիմնավորումները, որոնք կոլեգիայի տեսանկյունից համոզիչ էին ապրանքային նշանի գրանցման համար, ինչպես նաև բողոքում բերված այն փաստը, որ տվյալ նշանի նկատմամբ կա պայմանագիր և շուկայում դրա օգտագործումը որևէ պրոբլեմի չի հանգեցրել:

Կոլեգիայի անդամի կողմից հնչեց կոլեգիայի կարծիք, որ ապրանքային նշանը կարելի է գրանցել՝ հիմք ընդունելով բողոքում նշված փաստարկները:

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չեղյալ ճանաչել հայտարկված ապրանքային նշանի կրկնական փորձաքննության մասին որոշումը ամբողջությամբ և բավարարել «Խարկովսկայա բիսկվիտնայա ֆաբրիկա» ընկերության բողոքը՝ գրանցելով «КНИГА ДЖУНГЛЕЙ» (հայտի համարը IR 1044912) բառային ապրանքային նշանը 30-րդ դասի համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա. Ազիզյան